

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ. ԼԵԶԱՍՈՑԱԿԱՆ ՄԻ ԶԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոճաբանության մեջ այն կարծիքն է իշխում, թե գիտական ոճին բնորոշ չեն հուզականությունը, պատկերավորությունը: Գիտական շարադրանքը նախատեսված է տրամաբանական ընկալման համար և ձգտում է առավելագույն ճշգրտության, բայց ինչպես նկատել է շվեյցարացի լեզվաբան Շարլ Բալլին «...գիտական լեզուն բոլորովին էլ նույնը չէ, ինչ գիտական տերմինաբանությունը: ...Ձուտ անձնական և հուզական տարրը, անկախ ամեն ինչից, մշտապես թափանցում է մաքուր մտքի արտահայտության մեջ»:¹

Ելնելով գիտական ոճի հատկանիշներից՝ գիտնականը, ճիշտ է, ձգտում է ճշգրտության, միանշանակության, բայց միաժամանակ ձգտում է խուսափել միօրինակությունից, միապաղաղությունից, որի հետևանքով էլ գիտական ոճում, մասնավորապես նոր նոր գարգացող բնագավառներում, տեղ են գտնում հուզաարտահայտչական որոշ միջոցներ:

Գիտական ոճի տարբեր ենթաոճերում, ժանրերում տարբեր չափով են գործածվում արտահայտչական միջոցները: Այդ տեսակետից յուրահատկություններ ունեն մենագրությունը, դասագիրքը, ամսագրային հոդվածը, զրախտությունը, դասախոսությունը, զեկուցումը, գիտական բանավոր ելույթը, տեղեկագրային նյութերը: Ընդհանրապես գիտական հաղորդումներում, տեղեկագրային նյութերում հուզաարտահայտչական միջոցներ համարյա չեն գործածվում, իսկ ճշգրիտ գիտություններում քիչ են հանդիպում: Գիտության որոշ բնագավառներ, առանձնապես գրականագիտությունը, պատմագիտությունը, համեմատաբար շատ են պարունակում գեղարվեստական ոճի տարրեր: Գիտական խոսքի բնույթը նույնպես նշանակություն ունի՝ նկարագրական է, թե՞ բանավիճային: Շարադրման ոճը կարող է փոխվել նաև նույն աշխատության սահմաններում: Երբ հեղինակը արտահայտում է իր վերաբերմունքը, հարաբերությունը նկարագրվող երևույթի նկատմամբ, նրա օբյեկտիվ, հանգիստ շարադրանքի մեջ թափանցում են արտահայտչականության միջոցներ: Կարևոր դեր ունեն նաև հեղինակի անհատականությունը, կրթությունը, մասնագիտությունը, հաղորդման թեման: Արտահայտչականության միջոցների գործածության հարցում կարևոր են նաև գիտական հաղորդման շրջանակները: Այդ

¹ Տե՛ս Ս. Բալլ, *Французская стилистика*, М., 1961, էջ 143-144:

տեսանկյունից գիտական ոճը բաժանում են երեք ենթառճի՝ զուտ գիտական, գիտաուսումնական և գիտահանրամատչելի:²

Գիտաուսումնական ենթառճում անհրաժեշտ է հաշվի առնել սովորողի տարիքը, գիտական մակարդակը: Պարզ է, որ նույն ոճով չեն կարող շարադրվել, ասենք, ցածր դասարանների և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի դասագրքերը: Սովորաբար դասագրքերում տրվում է այս կամ այն բնագավառի հիմունքների ընդհանուր շարադրանքը, որի հետևանքով էլ դասագրքերը նմանվում են իրար շարադրման լեզվական միասնականությամբ ու միօրինակությամբ: Առաջին հայացքից թվում է, թե նրանցում չեն կարող հանդես գալ գեղարվեստական տարրեր: Պատկերավորությունն ու արտահայտչականությունը դասագրքերում, աշակերտի համար գրված այլ գրքերում անհրաժեշտ են շարադրանքը գրավիչ ու հետաքրքիր, նկարագրվող երևույթներն ավելի տպավորիչ դարձնելու, սովորողի դատողական մտածողությունը ակտիվացնելու նպատակով, որի շնորհիվ հեշտանում է յուրացման ընթացքը: Լեզվաոճական միջոցների գործածության չափը տարբեր է, մի կողմից՝ գրականության, պատմության, լեզվի, աշխարհագրության, մյուս կողմից՝ ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի դասագրքերում:

Գիտահանրամատչելի գրականությունը նախատեսվում է նաև տվյալ մասնագիտության հետ կապ չունեցող մարդու համար: Հանրամատչելիության աստիճանը պայմանավորվում է արտալեզվական գործոններով, նաև նրանով, թե ընթերցողը (կամ լսողը) ինչքանով է իրազեկ կամ կապված գիտության տվյալ բնագավառին: Հանրավորության դեպքում հեղինակը ձգտում է բարդ տերմինները բացատրել կամ էլ նրա փոխարեն գործածել հոմանիշը կամ համապատասխան լեզվական միջոցը, որպեսզի հետաքրքրություն առաջացնի գիտական տվյալ հարցի վերաբերյալ:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտական ոճում համեմատաբար շատ են գործածվում փոխաբերությունը, այնուհետև՝ մակդիրը, համեմատությունը և այլն: Նրանց գործածությունը շատ դեպքերում պայմանավորվում է նոր տերմինների ստեղծմամբ: Բառը աստիճանաբար կարող է կորցնել իր պատկերավորությունը, արտահայտչականությունը, դառնալ միանշանակ, վերածվել տերմինի, արտահայտել տվյալ գիտական հասկացության իմաստը: Այդպիսի շատ օրինակներ կարելի է բերել գիտության տարբեր բնագավառներից:

² Տե՛ս , օրինակ, А. Г. Барлас, Русский язык. Стилистика, М., 1978 , էջ 58-73:

Խաղողի վազերի հյութաշարժության ժամանակ անոթներից դուրս են հոսում հեղուկի կաթիլներ, որոնք նմանեցվում են արցունքների: Խաղողագործության մեջ դա անվանվում է «վազերի լաց»: «Արագ տաքացող հողերում տնկված և մակերեսային արմատներ ունեցող *վազերի լացը* շուտ է սկսվում»: (16, 134)¹: *Կմախք* ասելով հասկանում ենք կենդանիների մարմնի ոսկորների ամրոջությունը՝ ընդունված դասավորությամբ: Փոխաբերական իմաստը նկատի ունենալով՝ այս բառն օգտագործում են նաև քիմիական նյութերի համար: Եթե մոլեկուլի կառուցվածքային սխեմայի, կմախքի մեջ որևէ փոփոխություն է կատարվում, փոխվում են նաև նյութի հատկությունները: «Քիմիական նյութերն ունեն իրենց *կմախքային* աղյուսակները» (14, 439): Կամ՝ Քլորաջրածինը խոնավ օդում «ծխում է», որովհետև օդի ջրային գոլորշիների հետ առաջացնում է աղաթթվի շատ մանր կաթիլներ, ստացվում է «*մառախուղ*» (15, 26-27): Այդ նյութի ծխելու ընդունակությունը պայմանավորվում է նրանից քլորաջրածնի անջատումով, որից ստացվում է մառախուղ: Այսօր *ծխել, մառախուղ* բառերն արդեն չեն դիտվում որպես փոխաբերություններ, նրանք ունեն իրենց տերմինային նշանակությունները: Տերմինային նշանակություն ստացած բառերը հաճախ չեն բավարարում գիտնականներին. այստեղից էլ նրանց հակումը փոխաբերական իմաստ ունեցող բառերի, արտահայտությունների նկատմամբ, որոնց օգնությամբ ավելի հեշտ է պարզաբանվում իմացության տարբեր շերտերի հարաբերակցությունը: Զանի որ փոխաբերությունը հենվում է երկու երևույթների, առարկաների նմանության վրա, փաստորեն պարունակվում է երկու հասկացություն, ուրեմն փոխաբերությունը կարող է դառնալ երկու համակարգերի, հասկացությունների հարաբերակցության միջոց, կամ ինչպես Ս. Գուսևն է բնորոշում, «գիտության լեզվի տարբեր բաղադրամասերի կապի միջոց»²: Փիլիսոփայական տեսանկյունից մոտենալով հարցին՝ Ս. Գուսևը բացատրում է, թե ինչու գիտության մեջ կատարվող հեղաշրջումները, փոփոխությունները փոխում են նաև գիտական լեզվի չափանիշները: Այդ երևույթը գիտակցելը դժվարանում է նրանով, որ այդ չափանիշներն ավելի վաղ են փոխվում, քան գիտական լեզվի կառուցվածքում կատարվող փոփոխությունները բացահայտող միջոցները: Հայտնի է, որ գիտական ոճում անթույլատրելի է բազմիմաստությունը: Սակայն գիտության հետագա զարգացումը պահանջում է բացատրել իմացության տարբեր

¹ С.С. Гусев. Метафора – средство связи различных компонентов языка науки. – ИДВШ, Философские науки, 1978, №2, с. 72:

² Սուգին թիվը մատնանում է գիրքը, երկրորդը՝ էջը:

շերտերի կապերն ու հարաբերությունները: Ըստ Ս. Գուսևի կարևոր է պարզաբանել հետազոտության շրջանում գիտնականի կողմից կիրառվող անձնական-անհատական և գիտության սոցիալ-հաղորդակցական լեզուների հարաբերակցությունը: Առաջանում է ոչ միայն նկարագրության հին և նոր ձևերը համատեղելու, այլ նաև տվյալ գիտության՝ ընդհանուրի կողմից ընդունված կանոնների և նորմաների հետ անձնական-անհատական միջոցները կապակցելու անհրաժեշտություն: Իսկ դա հնարավոր է ներկայացնել փոխաբերության միջոցով, որովհետև նրա կառուցվածքը իր մեջ ընդգրկում է առնվազն երկու տարբեր հասկացություններ, որոնք կապված են նմանության, տարբերության բարդ հարաբերություններով:⁴ Ս.Ս. Գուսևը նշում է, որ փոխաբերությունը համոզես է գալիս, երբ հանդիպում են «տարասեռ առարկաների» հատկանիշները, և նրա գործածությունը պայմանավորվում է հենց բառերի իմաստների սկսվող տարբերակմամբ: Դա կապվում է անհրաժեշտ հետազոտության ընթացքում հանդիպող նոր փաստերին լեզվական ձևակերպում տալու անհրաժեշտության հետ:⁵

Ոճական առումով ընդհանրապես չեն տարբերվում գիտական ոճի երկու ձևերը՝ գրավոր և բանավոր, սովորաբար նրանց առաջադրվում են նույն պահանջները: Բայց բանավոր գիտական խոսքը պետք է ավելի մատչելի լինի, որովհետև այն ենթադրում է, որ հաղորդումը պետք է ընդունվի, հասկացվի հենց խոսելու պահին: Ելույթ ունեցողը հնարավորություն ունի հետևելու լսողի ընկալմանը, հարկ եղած դեպքում կարող է մի արտահայտություն փոխել մյուսով կամ տվյալ միտքը կրկնել տարբեր ձևերով և այլն: Գրավոր գիտական խոսքը կարող են կարդալ մի քանի անգամ, դժվար հասկանալի հարցերի մասին մտածել և այլն:

Ընդհանուր առմամբ գիտական ոճում քիչ փոխաբերություններ են գործածվում: Գիտնականը ավելի շուտ նախընտրում է ճշգրիտ տերմինը քան որևէ փոխաբերություն: Հաճախ փոխաբերությունը գործածվում է այն դեպքում, երբ դեռ չկա համապատասխան տերմինը: Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանին (1492 թ.) է պատկանում միջնադարյան առաջին գլոբուսի երևան գալը, մինչդեռ գլոբուս (լատ. Globus-գունդ) տերմինը շրջանառության մեջ է դրվել ավելի ուշ: Աշխարհագրագետներն այն անվանում էին «երկրային խնձոր»՝ նկատի ունենալով նրա կլորությունը (17, 19): Երբեմն էլ գիտնականը գործածում է համապատասխան տերմինը, հետո այն բացատրում փոխաբերությամբ: Այսպես՝ «Հին և նոր դասագրքերում, մենագրություններում և շաքարախտին վերաբերող հոդվածներում միշտ էլ հիշատակվում է այն մասին,

⁴ Stiu C.C. Гусев, Ա.տ., էջ 70-75:

⁵ Stiu C.C. Гусев, Наука и метафора, Л, 1984, с. 50-51:

որ այս հիվանդության կատարյալ ախտանիշներից մեկը հանդիսանում է *շատակերությունը*, կամ, ինչպես ասում են, *պոլիֆագիան* «գայլի ախորժակը» (18, 127): Հազվադեպ տերմինն էլ կարող է գործածվել փոխաբերական իմաստով: «Լաբորատորիա» բառի տակ հասկանում ենք անհրաժեշտ սարքեր, գործիքներ ու նյութեր ունեցող գիտական փորձեր կատարելու արհեստանոց, գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող հիմնարկ, բաժին: Փոխաբերական իմաստով հասկանում ենք ստեղծագործականգործունեության բնագավառ: «Դասապրոցեսում» լայնորեն պետք է օգտագործել նաև ուսուցչի անձնական «լաբորատորիայի» նյութերը» (19, 35):

Գիտական ոճում հիմնականում գործածվում են ընդհանուր-լեզվական փոխաբերություններ: Անհատական, հեղինակային փոխաբերություններ քիչ են հանդիպում: Անհատական գեղեցիկ փոխաբերություն է «մոլորակի երկնագույն աչքեր» արտահայտությունը (31): Դրանք մոլորակի բազմաթիվ լճերն են: Կամ՝ «քաղցրահամ թաս» (Վանդայի՝ Անտարկտիդայի խորհրդավոր լճի մասին, ձնռանը սառնամանիքները -40° , -50° են, իսկ մոտ 70 մետր խորության վրա ջուրը տաք է -25° , -27°) (20,292), «համամիութենական *աղաման*» (նկատի ունի Մերձկասպյան ցածրավայրի ձախափնյա մասում իրարից հեռու գտնվող երկու լճերը՝ Էլտոնն ու Բասկունչակը, որոնք աղով հարուստ են) (20,324), «բնական *թանաքաման*» (թանաքանման ջրով լի բնական լիճը գտնվում է Ալժիրում) (20,335):

Գիտական ոճում գործածվում են գրական ծագում ունեցող փոխաբերություններ. «Մեղվային խայթոցը չի կարող ծակել բոժոժի դիմացկուն շապիկը և չպաշտպանված օդակներն էլ հենց ներկայացնում են հասունացող մեղվի «*աքիլլեսյան գարշապարո*» (4,233): Գրագիտություն սովորելու համար նախ պետք է այբուբենը սովորել, տառաճանաչ դառնալ: Դա է նկատի առնվում «*ամուսնական կյանքի այբուբեն*» արտահայտության մեջ (21,63):

Գիտական ոճում հիմնականում գործածվում են պարզ մակդիրներ, որոնք ունեն փոխաբերական իմաստ՝ «Ակնարկելով իր տարագիր ժողովրդի ողբերգական ճակատագիրը՝ երեցը կծու հանդիմանությամբ նշավակում է Մերուժանի *դաժան* արարքները...» (4,281-282): Հանդիպում են նկարագրական, չափազանցական, նվազական, գունային մակդիրներ՝ նախադաս գործածությամբ, արտահայտված ածականով ու դերբայով՝ *կարմիր* բանաստեղծ (6,111), *սև* ցավեր (6,303), *սև* գուր (6,454), *դեղին* քաղաք (6,91), *հուրիդատող* մայրենի լեզու (8,429) և այլն:

Նկատելի է, որ գյուղատնտեսական, բժշկագիտական բնույթի շատ ուսումնասիրություններում մակդիրը և մակդրյալը միասին ձեռք են բերում տերմինային նշանակություն. մի մասն արդեն տերմինի արժեքով է գործած-

վում, մի մասն էլ տերմին դառնալու ճանապարհին է: «Նորածին երեխաները, սկսած կյանքի առաջին օրերից, կարող են հիվանդանալ *կապույտ հազով*» (12,14): «Նյարդային համակարգի ազդեցությունը իրականացվում է *թափառող նյարդի միջոցով*» (12,174): «*Հաստ աղիքը* ավելի կարճ է ... *Չիերի կույր և շրջանակաձև* աղիքները երկար են» (10,50): «*Չոր* կապը պետք է կատարել վազի հյութաշարժման շրջանի վերջում... *Կանաչ* կապը կարելի է կատարել ամբողջ վեզետացիայի ընթացքում» (9,47): Որոշ մակդիրներ գործածվում են չակերտների մեջ՝ «*սև*» ծաղիկ (12,9), «*կայծակնային*» ծիրանացան(13,369):

Գիտական ոճում գործածվում են նաև տարբեր կառուցվածքներ ունեցող համեմատություններ, որոնք սովորաբար խոսքային տվյալ միջավայրին հոգեհարազատ են, հոգեբանորեն պատճառաբանված: Այդ համեմատությունները հիմնականում կազմվում են բառային միջոցներով, հազվադեպ են ձևաբանական, շարահյուսական միջոցներով համեմատությունները: «Այնուամենայնիվ, կենդանու վերջավորությունը թույլ կախվում է ինչպես մտրակը» (11,281): «Իր մշտափոփոխ բնույթով կենդանի խոսակցական լեզուն նման է հոսող գետի» (3,107): «Ինչպես Դանթեն Վերգիլիոսին, այնպես էլ Չարենցը Դանթեին ընտրում է իբրև ուղեցույց և առաջնորդ՝ դեպի մահվան ու սոսկումի եզերքը» (6,374): Առարկան, երևույթը նույն նախադասության մեջ կարող է համեմատվել մի քանի առարկաների, երևույթների հետ. «Պետին գոյություն ունի ինչպես ծաղիկը , ինչպես առուն, ինչպես քիթեղը, որ թռվում է «առաջին աբլորականչի հետ» և մարում, «երբ մութը իր թևերն է փռում աշխարհի վրա» (7,61): Համեմատություններ ավելի շատ գործածվում են գրականագիտական ուսումնասիրություններում:

Գիտական ոճում հազվադեպ են գործածվում չափազանցությունը և նվազաբերությունը. «Նա տեսնում է հայրենիքի եզերքների կործանումը, այրվող գյուղերը, քաղաքները, արյան գետերն ու դիակները (6,94). «...ծողովողական բողոքի առվակը կհորդանա և իր հետ կտանի բոլոր ապարանքները» (6,72): Շրջաստի՛ն հաջորդող նախադասության մեջ տրվում է բացատրությունը՝ «Մի ամբողջ *քավարանի* միջով է անցկացնում վիպասանը իր հերոսներին: Այդ քավարանի անունը կյանք է» (5,251):

Ինչպես հայտնի է, կրկնությունը հատուկ է գեղարվեստական խոսքին, հատկապես չափածոյին: Տարբերում են բառակրկնությունների մի քանի տեսակ: Գիտական ոճում կրկնվում են հարաբերական դերանունները, շաղկապները, երբ հեղինակը ցանկանում է շեշտել, ընդգծել ասելիքը: Այսպես՝ «Յուրաքանչյուր շարքում կան և առարկա, և՛ առարկայի հատկանիշ, և տեղ ցույց տվող դերանուններ» (2,210): Կամ՝ «Տրամաբանական շեշտը... պայմանավորված է նրանով, թե որ հասկացությունը նախապես կա խոսողի մտածո-

ղության մեջ, և որ հասկացությունն է, որ նորություն է հաղորդում խոսողի մտածողության մեջ նախապես եղած այդ առարկայի մասին և վերագրվում նրա հասկացությանը» (1,31): Կրկնությունը նաև աստիճանավորումը, հակադրությունը, ճարտասանական հարցը հանդիպում են հիմնականում լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններում: Այսպես՝ «Բարդ ճակատագիր է վիճակվում նրան. ազնիվ այդ քաղաքացուն գրպարտում են, հեռացնում աշխատանքից, ձերբակալում» (5,432): «Ստեղծագործության կառուցվածքը պայմանավորված է հենց երազի ու իրականության, վերիուշի ու ռեալ առօրյայի հանդիպադրումով» (5,446): «...Ինչպե՞ս պետք է ապրի ժողովուրդը. սոսկ հոգո՞վ, թե՞ կենսական ու ռազմական գործությամբ, աղոթքներո՞վ, քրիստոնեական նիրհո՞վ, թե՞ աշխարհիկ մղումներով» (5,601):

Այսպիսով, գիտական ոճի լեզվաոճական յուրահատկությունները պայմանավորվում են գիտության բնագավառով, ժանրով, գիտական խոսքի բնույթով, ինչպես նաև լեզվաոճական տվյալ միջոցի էությանը:

Սկզբնաղբյուրներ

1. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Զ.Ա., ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, ԳՍՄ ԳԱ հր., Ե., 1976.-857էջ:
2. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Զ.Ա., Բաղիկյան Խ.Գ., ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, ԳՍՄ ԳԱ հր., Ե., 1974.- 587էջ:
3. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Եր. համալս. հր., Ե., 1987.-736էջ:
4. Սարինյան Ս.Ն., Րաֆֆի, Սովետ. գրող, Ե., 1985. 300 էջ:
5. Արզումանյան Ս.Զ., Սովետահայ վեպը, Սովետ. գրող, Ե., 1986.-456էջ:
6. Թամրազյան Զ.Ս., Սովետահայ գրականության պատմություն, Լույս, Ե., 1984.-608էջ:
7. Աղայան Ն.Ս., Սովետահայ պատմվածքը, ԳՍՄ ԳԱ հր., Ե., 1968.-232էջ:
8. Հայ ժողովրդի պատմություն, ԳՍՄ ԳԱ հր., Ե., 1984.-691էջ:
9. Մելքոնյան Ա.Ա., Տնամերձ այգեգործություն, Հայ. պետ. հր., Ե., 1960.-93էջ:
10. Անասնաբուծության հիմունքները, «Հայաստան», Ե., 1965.-319էջ:
11. Մանվելյան Մ.Պ., Սարգսրյան Գ.Պ., Անասնաբուծական վիրաբուժություն, «Լույս», Ե., 1978.-351էջ:
12. Իբրյան Ա.Ռ., Մանկաբուծության ներածություն, «Հայաստան», Ե., 1983.-272էջ:
13. Աստվածատրյան Վ.Ա., Մանկական հիվանդություններ, «Լույս», Ե., 1975.-438էջ:
14. Օ.Ս. Գամեևա, Ֆիզիկական և կոլեկտիվային քիմիա, Ե., 1931:
15. Ս.Ի. Վասյուչենկո, Քիմիա, Ե., 1975:
16. Պ.Կ. Այվազյան, Խաղողագործություն, Ե., 1975:
17. Թ.Խ. Հակոբյան, Աշխարհագրության համառոտ պատմություն, Ե., 1967:
18. Ռ.Ս Մամիկոնյան, Գ.Գ. Գևորգյան, Շաքարախիտ և շաքարախտային անգիոպաթիաներ, Ե., 1971:
19. Ռ.Վ. Սարգսյան, Դպրոցականների ճանաչողական գործունեության ակտիվացման հարցեր, Ե., 1984:
20. Ա.Պ. Սուրանով, Սուրբակի երկնագույն աչքերը, Ե., 1981:
21. Ա.Ս. Թովմասյան, Սերմնաբանության հիմունքները, Ե., 1977:
22. Մանկավարժություն, Ե., 1969: